

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԺՇԿԱԸՆԿԱՐՅԱԳՐԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՆ ՈՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՈՄԱՏԻԿ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Սիմոնյան Կ.Հ.

*Երևանի Մ. Զեքարցու անվ. պետական բժշկական համալսարանի մանկաբուժության և
մանկական վիրաբուժության թիվ 2 ամբիոն, Երևան, Հայաստան
Առաջին մանկական հիվանդանոցի համալսարանական կլինիկա, Երևան, Հայաստան*

Տարբեր աշխարհագրական գոտիներում մարդու օրգանիզմը ենթակա է տվյալ տարածաշրջանին բնորոշ միջավայրի գործոնների որոշակի ազդեցությանը: Հիմք ընդունելով բժշկաաշխարհագրական տարածաշրջանային բաշխման սկզբունքները, ՌԴ Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ա.Պ.Հայրիյանի կողմից մեր հանրապետությունն առաջին անգամ բաժանվեց հինգ տարածաշրջանների՝ Կենտրոնական, Շիրակի, Սևանի, Հյուսիս-արևելյան և Սյունիքի: Նշված տարածաշրջաններից յուրաքանչյուրն ունի համեմատաբար առանձնահատուկ ազդեցություն մարդու օրգանիզմի վրա:

Տվյալ հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել մանկական սոմատիկ ախտաբանության որոշ ասպեկտները, վերագրված ՀՀ բժշկաաշխարհագրական գոտիներին: Ուսումնասիրված են 2003-2009 թթ. ԵՊԲՀ-ի Համալսարանական մանկական հիվանդանոցում սոմատիկ հիվանդություններով բուժված 7349 մանուկների հիվանդության պատմագրեր: Հոսպիտալացման կառուցվածքի վերլուծությունը ցույց է տվել, որ նվազագույնը այն եղել է 2004 թ-ին (8,5%), իսկ առաջին երեք տեղերը համապատասխանաբար զբաղեցնում են 2007 (15,9%), 2008 (17,5%) և 2009 (18,4%) թվականները: Երեխաների հոսպիտալացման տվյալների վերլուծությունը, ըստ ՀՀ բժշկաաշխարհագրական գոտիների, ցույց է տվել բոլոր գոտիներում 2003թ-ի համեմատ ինտենսիվ ցուցանիշի հավաստի բարձրացում, իսկ հոսպիտալացման կառուցվածքի ուսումնասիրությունը երկու տարիքային խմբերում (սորածնային՝ 0-28 օր և կրծքային ու դպրոցահասակ) վերակենդանացման բաժանմունք ընդունված երեխաների առավելագույն տեսակարար կշիռ:

Նշված փաստը վկայում է մանկաբուժական ծառայության որոշ թերացումների մասին և պահանջում է լրացուցիչ հետազոտություններ՝ ծառայության վերամոդելավորման ուղղությամբ, ինչպես կառուցվածքային, այնպես էլ կադրային: